«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

# ՈՐՈՇՈՒՄ

**5** հոկտեմբեր **2012**

## Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի **2011** թվականի հոկտեմբերի **19**-ի **N 2** նիստի որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի **2011** թվականի հոկտեմբերի **19**-ի **N 2** նիստի որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը (զեկուցող` ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)` գիտական խորհուրդն արձանագրում է. անցած ամիսների ընթացքում ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները շարունակել են աշխատանքները կրթական նոր բարեփոխումների և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման գործընթացն արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ։ Հիմք ընդունելով համալսարանի ռեկտորատի 2012 թվականի օգոստոսի 28-ի N 35 նիստի առաջարկությունը` գիտական խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի **2011** թվականի հոկտեմբերի **19**-ի **N 2** նիստի որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   - Կիսամյակի ընթացքում բակալավրիատի ուսուցման ուսանողների անհարգելի բացակայությունների 60 ժամի դեպքում դեկանի կողմից տալ նկատողություն, 80 ժամի դեպքում` ռեկտորի կողմից նկատողություն, 90 ժամի դեպքում` ռեկտորի կողմից խիստ նկատողություն, 100 և ավելի ժամերի դեպքում ուսանողը ենթակա է համալսարանից հեռացման։
   - Կիսամյակի ընթացքում մագիստրատուրայի ուսուցման ուսանողների անհարգելի բացակայությունների 30 ժամի դեպքում դեկանի կողմից տալ նկատողություն, 40 ժամի դեպքում` ռեկտորի կողմից նկատողություն, 50 ժամի դեպքում` ռեկտորի կողմից խիստ նկատողություն, 60 և ավելի ժամերի դեպքում ուսանողը ենթակա է համալսարանից հեռացման։
   - Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերում ուսանողների գիտելիքների բազմագործոնային գնահատման «ընթացիկ ակտիվություն» գործոնի փոխարեն կիրառել «հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» միասնական գործոնը` ստորև բերված աղյուսակի համաձայն.

| Հաճախումների ցուցանիշը | Հաճախումների և ընթացիկ ակտիվության առավելագույն գնահատականը | | |
|---|---|---|---|
| | որպես առանձին բաղադրիչ հաշվարկային գնահատականի (տարբերակված գնահատականով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանքով մոդուլների համար (տե՛ս հավելված 7, կշիռը՝ 20)) | հաշվարկային գնահատականի (տարբերակված գնահատականով (քննությամբ ավարտվող) առանց անհատական աշխատանքի մոդուլների համար (տե՛ս հավելված 7, կշիռը՝ 30)) | որպես առանձին բաղադրիչ հաշվարկային գնահատականի (ստուգարքով ավարտվող) |
| 80-100% | 20 | 30 | 60 |
| 60-79% | 16 | 24 | 48 |
| 40-59% | 12 | 18 | 36 |
| 20-39% | 8 | 12 | 24 |
| մինչև 19% | 4 | 6 | 12 |

2. Կատարել համապատասխան փոփոխություններ «Կրեդիտային համակարգում գիտելիքների գնահատման և վարչարարության մեխանիզմի մասին կանոնակարգում», «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կրեդիտային համակարգով մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների գնահատման» և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կրեդիտային համակարգով հեռակա ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների գնահատման» կարգերում:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հոկտեմբերի 8-ից:

Գիտական խորհրդի նախագահ Կ. Լ. Աթոյան

05.10.2012թ.